

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հուլիսի 2011 թվականի N 638-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետը, փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործարար միջավայրի բարելավման հարցերով պետության և գործարար համայնքի արդյունավետ երկխոսությունն ապահովելու նպատակով՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ և հաստատել դրա կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի աշխատակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում առաջարկել գործարար համայնքի և աջակցող դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներին Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդին առաջարկություններ կայացնել խորհրդի քարտուղարությանն իրենց կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության վերաբերյալ.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմակերպել Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի առաջին նիստը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

S. Մարգարյան

2011 թ. հուլիսի 7
Երևան

Կ Ա Ջ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- Հ. Աբրահամյան - ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
- Կ. Ճշմարիտյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար
- Գ. Մելքոնյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
- Մ. Դեյվիս - Վերակառուցման և զարգացման
Եվրոպական բանկի Երևանի գրասենյակի
ղեկավար (համաձայնությամբ)
- Ա. Սորոկին - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության
Երևանի գրասենյակի ղեկավար (համաձայնությամբ)
- Գ. Պողոսյան - «Գործարար շահերի պաշտպանության ցանց» հասարակական կազմակերպության
համակարգող (համաձայնությամբ)՝ 5 տարի ժամկետով
- Ե. Հովհաննիսյան - «Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն» հասարակական
կազմակերպություն (համաձայնությամբ)՝ 4 տարի ժամկետով
- Կ. Մարտիրոսյան - Երևանի առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն
(համաձայնությամբ)՝ 3 տարի ժամկետով
- Յ. Գրիգորյան - «Վաճառականների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
(համաձայնությամբ)՝ 5 տարի ժամկետով
- Փ. Թադևոսյան - «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության
նախագահ (համաձայնությամբ)՝ 5 տարի ժամկետով
(*հավելվածը փոփ. 11.04.12 N 332-Ն, 29.05.13 N 393-Ն, 10.06.13 N 444-Ն, 17.10.13 N 939-Ն, 11.09.14
N 873-Ն*)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) գործունեության կարգը:

2. Խորհուրդը խորհրդատվական-խորհրդակցական մարմին է, որը պետական մարմիններ փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) ոլորտում գործարար միջավայրի զարգացման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով գործարար համայնքի հետ համատեղ իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ:

3. Խորհրդի գործունեության կազմակերպչական-մեթոդական ապահովումն իրականացնում է խորհրդի քարտուղարությունը (այսուհետ՝ քարտուղարություն), որի աշխատակարգն ու կառուցվածքը հաստատվում է խորհրդի կողմից:

II. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Խորհրդի գործունեության սկզբունքներն են՝
1) պատասխանատվությունը հասարակության առջև.
2) խորհրդի անդամների իրավահավասարությունը.
3) գործունեության թափանցիկությունը.
4) գործարար համայնքի կարծիքը հաշվի առնելը՝ առաջարկությունների նախապատրաստման և ընդունման ժամանակ:

5. Խորհրդի գործառույթներն են՝
1) ՓՄՁ-ի զարգացման համար արդիական հարցերի քննարկումը.
2) քարտուղարության կողմից առաջարկված՝ ՓՄՁ-ի զարգացման, ինչպես նաև ոլորտի պետական կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ լուծումների մասին համապատասխան առաջարկությունների մշակումը:

6. Խորհուրդն իրավունք ունի
1) անհրաժեշտության դեպքում իր նիստերին հրավիրելու պետական կառավարման մարմինների ղեկավարներին կամ այլ շահագրգիռ անձանց՝ նիստին առաջադրված լուծումների համատեղ քննարկման նպատակով.

2) պետական մարմիններ ներկայացնելու առաջարկություններ ՓՄՁ-ի ոլորտի պետական քաղաքականության հետագա զարգացման վերաբերյալ.

3) պետական մարմիններից ստանալու անհրաժեշտ՝ ՓՄՁ-ի ոլորտին առնչվող տեղեկատվություն:

6.1. Խորհրդի կազմում գործարար համայնքը ներկայացնում են հինգ ներկայացուցիչներ, որոնք, բացառությամբ խորհրդի առաջին կազմի, ընդգրկվում են հինգ տարի ժամկետով:

(6.1-ին կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.2. Գործարար համայնքի ներկայացուցիչների՝ խորհրդի կազմում ընդգրկվելու ժամանակաշրջանի ավարտին նախորդող եռամսյակում, քարտուղարությունը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում հայտարարություն է հրապարակում նոր անդամների թեկնածությունների ընտրության նպատակով: Խորհուրդը նիստի

ընթացքում քննարկում է քարտուղարությանը դիմած նոր ներկայացուցիչների թեկնածությունները և նրանց թվից ընտրում նոր անդամներ:

(6.2-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.3. Խորհրդի կազմում՝ որպես գործարար համայնքի ներկայացուցիչ ընդգրկվելու հայտ կարող են ներկայացնել այն գործարար շահերը ներկայացնող միավորումները և այլ ոչ առևտրային կազմակերպություններ՝

1) որոնք ներկայացնում են 15-ից ոչ պակաս անդամների կամ շահառուների շահերը.

2) որոնց անդամների 2/3-ը կամ նրանց անդամներ կամ շահառուներ հանդիսացող միավորումների 2/3-ը գերփոքր և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտներ են՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով:

(6.3-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.4. Խորհրդի կազմում ընդգրկվելու հայտի հետ մեկտեղ գործարար միավորումը ներկայացնում է առաջարկություն իր կողմից քարտուղարությանը տրամադրվելիք աջակցության մասին:

(6.4-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.5. Քարտուղարությունը խորհրդի կազմում՝ որպես գործարար համայնքի ներկայացուցիչ ընդգրկվելու հայտ ներկայացրած գործարար միավորումների թվից ընտրում է խորհրդի անդամների թեկնածուներին՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

1) գործարար միավորման գործունեության պատմությունը.

2) առաջարկվող աջակցության ձևը:

(6.5-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.6. Խորհուրդը նոր անդամներին ընտրում է քվեարկությամբ՝ սույն աշխատակարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված կարգով:

(6.6-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.7. Խորհրդի՝ գործարար համայնքը ներկայացնող անդամների լիազորությունները, քարտուղարության ներկայացմամբ, կարող են դադարեցվել ժամկետից շուտ: Այս դեպքում հաշվի է առնվում համապատասխան անդամի կողմից ներկայացվող գործարար համայնքի մասնակցությունը խորհրդի աշխատանքներին, մասնավորապես՝

1) գործարար համայնքի կողմից խորհրդի քննարկմանն առաջադրվող հարցերը՝ դրանց բովանդակությունը և արդիականությունը.

2) խորհրդի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները՝ հիմնավորմամբ.

3) քարտուղարության աշխատանքներին ցուցաբերած աջակցությունը.

4) գործարար համայնքը ներկայացնող համապատասխան անդամի մասնակցությունը խորհրդի նիստերին: Երկու անգամ առանց հիմնավոր պատճառի չմասնակցելը խորհրդի նիստերին համարվում է անհարգելի:

(6.7-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.8. Խորհրդի աշխատանքներին խորհրդի համապատասխան անդամի կողմից ներկայացվող գործարար համայնքի մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը քարտուղարությանն է տրամադրվում գործարար համայնքի հանդիպումների արձանագրությունների միջոցով:

(6.8-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

6.9. Խորհրդի՝ գործարար համայնքը ներկայացնող անդամի լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնելու դեպքում նոր անդամների ընտրությունն անցկացվում է սույն աշխատակարգի 6.2-6.6-րդ կետերով սահմանված կարգով:

(6.9-րդ կետը լրաց 11.04.12 N 332-Ն)

7. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով:

8. Խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրել հրատապ հարցերի և խնդիրների լուծման համար՝ խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ:

9. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների 2/3-ը:
10. Խորհրդի նիստի օրակարգը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր խորհրդի անդամներին են տրամադրվում նիստից 5 օր առաջ:
11. Խորհրդի քննարկմանը ներկայացվող հարցերը մշակում է քարտուղարությունը:
12. Խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստի ընթացքում ընդունված որոշումների կատարման մասին քարտուղարի զեկուցմամբ:
13. Խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնում է խորհրդի քարտուղարը:
14. Հարցի քննարկման ընթացքում խորհրդի անդամների կողմից նոր առաջարկներ ներկայացնելու կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է հաջորդ նիստ: Քարտուղարությունը պարտավոր է ապահովել պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև հնչեցված առաջարկությունների վերլուծությունը:
15. Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պետական մարմինների ներկայացուցիչներ:
16. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
17. Ձայների հավասարության դեպքում որոշիչ է Հայաստանի Հանրապետության վարչապետի ձայնը, իսկ խորհրդի այն անդամը, որը համաձայն չէ խորհրդի ընդունված որոշմանը, կարող է ներկայացնել գրավոր կարծիք, որը կցվում է խորհրդի նիստի արձանագրությանը:
18. Խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարության կողմից: Արձանագրության մեջ ամրագրվում են օրակարգում ընդգրկված հարցերը, մասնակիցների ելույթները, ինչպես նաև պետական և այլ մարմինների համար ՓՄՁ-ի ոլորտի բարելավման հարցերի վերաբերյալ մշակված առաջարկությունները կամ լուծումները:
19. Խորհրդի արձանագրությունը և որոշումները նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարությունը տրամադրում է խորհրդի անդամներին:
20. Խորհուրդը կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

III. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

21. Խորհրդի նախագահը`
- 1) վարում է խորհրդի նիստերը.
 - 2) ստորագրում է խորհրդի արձանագրությունները.
 - 3) իր բացակայության դեպքում խորհրդի անդամներից մեկին հանձնարարում է վարել խորհրդի նիստերը.
 - 4) հանձնարարականներ է տալիս քարտուղարությանը.
 - 5) բաշխում է պարտականությունները խորհրդի անդամների միջև:

IV. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

22. Խորհրդի անդամն իրավունք ունի`
- 1) խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր.
 - 2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի քննարկմանը ներկայացված հարցերի վերաբերյալ:
23. Խորհրդի անդամը խորհրդի նիստերին մասնակցում է անձամբ:
(*հավելվածը լրաց. 11.04.12 N 332-Ն*)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Մարգարյան